

## ՅԾ-ՀԱՇՎԱՊԱՅ 7 - Համակցում b2b.armsoft հարթակի հետ

Հայկական Ծրագրեր ընկերությունը ներկայացնում է **ՅԾ-Հաշվապահ 7** նոր սերնդի հաշվապահական համակարգը:

ՅԾ-Հաշվապահ 7-ը Հայաստանում ամենատարածված հաշվապահական համակարգի՝ ՅԾ-Հաշվապահի նոր տարբերակն է:

### ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

#### Համակցում b2b.armsoft հարթակի հետ

b2b.armsoft-ը գերարդյունավետ և հարմար առցանց համագործակցության միջավայր է: Այն ներառում է մի շարք տեղեկատվական ծառայություններ և թույլ է տալիս փոխանակել էլեկտրոնային փաստաթղթեր:

ՅԾ-Հաշվապահ 7 համակարգն ինտեգրված է b2b.armsoft-ի հետ, այսինքն հարթակի հնարավորությունները կարելի է օգտագործել անմիջապես համակարգի միջից:

#### Տեղեկատվական ծառայություններ

- Հայաստանի և Արցախի կազմակերպությունների տեղեկատու
- Պատվիրող կազմակերպությունների տեղեկատու
- Մատակարարների ապրանքացանկեր
- ԱԴԳՏ և ԱՏԳԱԿ դասակարգիչներ
- ՀՀ-ի տոների և հիշատակի օրերի օրացույց

#### Էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակում

- Փոխանցման հաշիվներ
- Պատվերներ մատակարարներին
- Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտ
- Հաշիվ-ապրանքագրեր

**Ուշադրություն!** b2b.armsoft հարթակի ծառայություններից օգտվել կարող են տարեկան սպասարկման պայմանագիր ունեցող պատվիրատուները:

#### Վերլուծական հաշվառում անալիտիկ խմբերով

Անալիտիկ խմբերը ծառայում են սինթետիկ հաշիվներով լրացուցիչ վերլուծական հաշվառում կազմակերպելու համար: Անալիտիկ խմբեր կիրառելիս թղթակցությունում հաշիվն ընտրելուց հետո հնարավոր է նշել վերլուծական արժեքները: Անալիտիկ խմբերի օգնությամբ կարելի է հաշվառել, օրինակ, եկամուտները և ծախսերը՝ ըստ պրոյեկտների, հոդվածների, ստորաբաժանումների կամ բիզնեսի ուղղությունների (սեգմենտների): Արդյունքում հնարավոր է անալիտիկ խմբերի կտրվածքներով տեսնել մանրակրկիտ տեղեկատվություն: Մասնավորապես հնարավոր է ձևավորել մնացորդների և շրջանառության հաշվետվությունները՝ ըստ անալիտիկ խմբերի:

#### Կադրային հաշվառում

ՅԾ-Հաշվապահ 7 համակարգը թույլ է տալիս լուծել կազմակերպության կադրային գործընթացի կազմակերպման հետ կապված մի շարք խնդիրներ: Համակարգն օգնում է գործող օրենսդրությանը համապատասխան վարել կադրային հաշվառում, ինչը ներառում է.

- Աշխատակցի անձնական տվյալների հաշվառում,
- Ընդունման, փոխադրման և ազատման հրամանների գրանցում,
- Աշխատակցի անձնական թերթիկի ձևավորում:

#### Բեռնամաքսային հայտարարագրի (ԲՄՀ) ձևակերպում

ՅԾ-Հաշվապահ 7 համակարգը թույլ է տալիս ավտոմատացնել ՀՀ ներմուծվող ապրանքների բեռնամաքսային հայտարարագրի (ԲՄՀ) ձևակերպումը: Բեռնամաքսային հայտարարագիր (ԲՄՀ) փաստաթուղթը ծառայում է մաքսային սահմանի վրա գանձված մաքսատուրքի, մաքսավճարի և ԱԱՀ-ի արտացոլման և հաշվառման համար:

#### Ապրանքների ձեռքբերման և իրացման ԱԱՀ-ի հաշվառում

ՀԾ-Հաշվապահ 7 համակարգում ապրանքների ձեռքբերման, ինչպես նաև մաքսային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարները գրանցվում են դեբետային ԱԱՀ-ի հաշվառման մատյաններում:

Իրացման դեպքում ապրանքի կրեդիտային և դրանց համապատասխան դեբետային ԱԱՀ-ի գումարները իրենց արտացոլումն են ստանում Վաճառքների վերլուծություն մատյանում: Վերջինս թույլ է տալիս ավտոմատացնել ԱԱՀ օրենքի 26 հոդված 4 կետի պահանջը: Համակարգը վերահսկում է այն գործարքները, որոնց արդյունքում ապրանքների իրացման և ձեռքբերման ԱԱՀ-ի միջև առաջանում են բացասական տարբերություններ: Հայտնաբերված տարբերությունները համակարգն առաջարկում է գրանցել որպես հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարներից նվազեցման գործառնություն:

### **Տեղեկատուների, Փաստաթղթերի և Հաշվետվությունների ընդլայնում**

ՀԾ-Հաշվապահ 7-ը թույլ է տալիս գրանցել հիմնական հաշվապահական տվյալները, սակայն կազմակերպություններին հաճախ անհրաժեշտ է լինում գրանցել իրենց գործունեությանը հատուկ լրացուցիչ տվյալներ, օրինակ գործընկերոջ ավտոմեքենայի համարանիշ կամ նյութական արժեքի ծավալը, որը նախատեսված չէ ստանդարտ տարբերակում:

Այս խնդրի լուծման համար ՀԾ-Հաշվապահ 7 համակարգում ավելացել է հնարավորություն, որը թույլ է տալիս ծրագրավորել տեղեկատուներում և փաստաթղթերում լրացուցիչ դաշտերի ավելացում և դրանց արտացոլումը հաշվետվություններում:

### **Հաշվապահական տվյալների պաշտպանվածություն Dropbox ամպային պահոցում**

ՀԾ-Հաշվապահ 7-ի տվյալների պահոցների պահեստային պատճենները պարբերաբար ձայնագրվում են Dropbox ամպային պահոցում: Սա բացառում է համակարգի տեխնիկական խնդիրների դեպքում հաշվապահական տվյալների կորուստը:

### **Տվյալների փոխանակում վեբ-սերվիսների օգնությամբ**

ՀԾ-Հաշվապահ 7-ը տվյալների փոխանակման առումով բաց համակարգ է: Այն կարելի է համակցել այլ բիզնես համակարգերի՝ օրինակ առևտրական կամ արտադրական լուծումների հետ:

Վեբ-սերվիսների միջոցով կարելի է.

- ստանալ անհրաժեշտ տեղեկություն՝ օրինակ ապրանքա-նյութական արժեքների ցանկ, գործընկերների մնացորդներ, վաճառքի փաստաթղթեր և այլն,
- ձևավորել տեղեկատուներ՝ օրինակ ապրանքա-նյութական արժեքների, գործընկերների, աշխատակիցների և այլն,
- գրանցել փաստաթղթեր՝ ձեռքբերման, վաճառքի, դրամարկղ մուտքի, դրամարկից ելքի և այլն:

ՀԾ-Հաշվապահ 7-ի վեբ-սերվիսների օգնությամբ օգտագործող կարող է համակցել իր ինտերնետային կայքը հաշվապահության հետ:

## **ՀԾ-ՀԱՇՎԱՊԱՀ 7 ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ ԵՎ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

ՀԾ-Հաշվապահ 7 համակարգի թողարկումը նախատեսվում է 2017թ.-ի հուլիս ամսին:

01.07.2017թ.-ից գործելու է ՀԾ-Հաշվապահ 7 համակարգի և տարեկան սպասարկման հետևյալ գնացուցակը:

<b>ՀԾ-Հաշվապահ 7</b>	<b>Գին</b>
Համակարգ 1 աշխատատեղի համար	<b>298 000</b>
Համակարգ 4 աշխատատեղի համար	<b>560 000</b>
Համակարգ 9 աշխատատեղի համար	<b>750 000</b>
Տարեկան սպասարկում 1 աշխատատեղի համար	<b>105 000</b>
Տարեկան սպասարկում 4 աշխատատեղի համար	<b>180 000</b>
Տարեկան սպասարկում 9 աշխատատեղի համար	<b>240 000</b>

Բոլոր գները նշված են ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ:

1. ՀԾ-Հաշվապահ 6-ի սպասարկման մեջ գտնվող պատվիրատուները ՀԾ-Հաշվապահ 7-ին անցում են կատարում առանց լրացուցիչ վճարման:
2. Այն պատվիրատուները, որոնց ՀԾ-Հաշվապահ 6 համակարգի սպասարկումն ավարտվել է, ՀԾ-Հաշվապահ 7-ին անցնելու համար պետք է կնքեն տարեկան սպասարկման պայմանագիր:

ՀԾ-Հաշվապահ 7 համակարգի աշխատանքային միջավայրը էականորեն չի տարբերվում ՀԾ-Հաշվապահ 6 համակարգից: ՀԾ-Հաշվապահ 7 համակարգին անցնելիս օգտագործողները կարող են հեշտությամբ սկսել համակարգով աշխատանքը և խուսափել նոր աշխատանքային միջավայրին սովորելու վրա ծախսվող ժամանակից և անհարմարությունից:

### **Խրախուսման միջոցառումներ**

1. Այն պատվիրատուները, ում ՀԾ-Հաշվապահ 6 համակարգի սպասարկումն ավարտվում է 01.07.2017-01.10.2017 ժամանակահատվածում կարող են մինչև 01.07.2017թ.-ը կնքել տարեկան սպասարկման պայմանագիրը՝ վճարելով այդ պահին գործող գնացուցակի գումարը:
2. Այն պատվիրատուները, ովքեր ընթացիկ սպասարկման պայմանագիրը կկնքեն Նախորդ պայմանագրի ավարտից 20 աշխատանքային օրվա ընթացքում, կստանան 10000 դրամի չափով զեղչ:
3. ՀԾ-Հաշվապահ 7 և ՀԾ-ԻնտերնետԲանկ համակարգերը միաժամանակ օգտագործողները սպասարկման պայմանագիրը կնքելիս կստանան 10000 դրամի չափով զեղչ:

### **Համակարգի պաշտպանությունը**

ՀԾ-Հաշվապահ 7 համակարգի պաշտպանությունը իրականացված է ROCKEY տեսակի բանալու միջոցով: Բանալու թարմացումը հնարավոր է իրականացնել հեռահար եղանակով:

### **Տեխնիկական պահանջները**

ՀԾ-Հաշվապահ 7 համակարգի տեղադրման և աշխատանքի համար անհրաժեշտ է, որ բավարարվեն Հավելված 1-ում նշված տեխնիկական պահանջները:

### **ՀԾ-Հաշվապահ 6 համակարգի վաճառքի դադարեցում**

01.07.2017-ից դադարեցվելու է ՀԾ-Հաշվապահ 6 համակարգի վաճառքը և տարեկան սպասարկման պայմանագրերի վերակնքումը:

### **ՀԾ-Հաշվապահ 6 համակարգի սպասարկումը և զարգացումը**

01.07.2017-ից դադարեցվելու է ՀԾ-Հաշվապահ 6 համակարգում նոր հնարավորությունների զարգացումը: Կատարվելու են ընթացիկ սպասարկման աշխատանքները և ծրագրային ապահովման մեջ հայտնաբերված սխալների ուղղումները:

## Տեխնիկական պահանջներ

ՀԾ-Հաշվապահ 7 համակարգի աշխատանքի համար անհրաժեշտ է, որ համակարգիչը բավարարի հետևյալ պահանջներին.

### Սարքավորումներ

**Պրոցեսոր** - INTEL CORE 2 DUO կամ համատեղելի, նվազագույնը 1800 MHz հաճախականությամբ (խորհուրդ է տրվում 2,2 GHz կամ ավելի արագ)

**Հիշողությունը** – 2 GB կամ ավելի

#### Կոշտ սկավառակի վրա

- սերվեր համակարգի դեպքում 3 GB ազատ տարածք (հավելյալ տարածք լրացուցիչ տվյալների պահոցի համար)
- կլիենտ համակարգի դեպքում 300 MB ազատ տարածք

**Սոնիտոր** - նվազագույնը խտությունը 1024x768 (խորհուրդ է տրվում 1280x720)

### Օպերացիոն համակարգեր

Windows 7 SP1 (x86 և x64)

Windows 8 (x86 և x64)

Windows 8.1 (x86 և x64)

Windows 10 (x86 և x64)

Windows Server 2008 SP2 (x86 և x64)

Windows Server 2008 R2 SP1

Windows Server 2012

Windows Server 2012 R2

Windows Server 2016

### Ծրագրային ապահովումներ

Microsoft .NET Framework 3.5 SP1

Microsoft .NET Framework 4.6.2

VBA Component of Office

**Օգնության ձեռնարկը օգտագործելու համար անհրաժեշտ է ինտերնետ կապի առկայություն և հետևյալ դիտարկիչներից որևէ մեկը.**

Internet Explorer

Google Chrome

Mozilla Firefox

Opera

Տեղեկություններն արտահանվում են MS Word և MS Excel համակարգեր՝ սկսած Microsoft Office 2010-ից: Որոշ սահմանափակումներով կարելի է արտահանել նաև OOO Writer և OOO Calc համակարգեր՝ սկսած OpenOffice.org 3.4-ից: